Հավելված 1
*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2008թ. օգոստոսի 5-ի թիվ 48-Ա որոշմամբ*

Արարատ, Կոտայք, Վայոց ձոր, Սյունիք մարզերի համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների

2008թ.հոկտեմբերի 12-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 1 | Քվեարկության օրվա, քվեարկության տեղի եւ ժամանակի մասին ընտրողները ծանուցվում են<br>*ընտրության նշանակվելուց հետո, բայց ոչ ուշ քան քվեարկության օրվանից 3 օր առաջ* | 13, կետ 8 | մինչեւ 2008թ.հոկտեմբերի 9-ը | Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանում |
| 2 | Դիտորդների հավատարմագրումն իրականացվում է<br>*ընտրություններ նշանակելուց հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ* | 29, կետ 2 | մինչեւ 2008թ.հոկտեմբերի 2-ը | ԿԸՀ |
| 3 | Համայնքում ընտրական տեղամասերը կազմավորվում են<br>*քվեարկությունից ոչ ուշ, քան 45 օր առաջ* | 15, կետ 2 | մինչեւ 2008թ.օգոստոսի 28-ը | Լիազոր մարմին կամ նրա համապատասխան տարածքային ստորաբաժանում |
| 4 | Համայնքում տեղամասային կենտրոնները կազմավորվում են<br>*քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ* | 17, կետ 1 | մինչեւ 2008թ.օգոստոսի 28-ը | Համայնքի ղեկավար |
| 5 | Տեղամասային կենտրոնի կազմավորման մասին քաղաքացիները եւ տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարը համայնքի ղեկավարի կողմից` հայտարարությունների միջոցով տեղեկացվում են<br>*տեղամասային կենտրոնի կազմավորումից հետո` երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ քան քվեարկության օրվանից 43 օր առաջ* | 17, կետ 3<br>ԿԸՀ 22.06.05թ. թիվ 15-Ն որոշում | երկօրյա ժամկետում, մինչեւ 2008թ.օգոստոսի 30-ը | Համայնքի ղեկավար |
| 6 | Ընտրական տեղամասերը, տեղամասային կենտրոնները հաստատվում եւ այդ տվյալները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են | 42, կետ 1<br>ենթակետ 3,4 | Հաստատելուց հետո երկօրյա ժամկետում | ԸԸՀ |
| 7 | Ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոնների տարածքները տնօրինող հաստատությունների ղեկավարներին տրամադրվում եւ տեղամասային կենտրոնում փակցվում են<br>*քվեարկության օրվանից առնվազն 40 օր առաջ* | 12, կետ 1<br>13, կետ 4 | 2008թ.սեպտեմբերի 2-ին | Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար<br>ՏԿ տարածքը տնօրինող հաստ. ղեկավար |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 8 | Ընտրողների ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են<br>*քվեարկությունից առնվազն 40 օր առաջ* | 12, կետ 2[1] | 2008թ.սեպտեմբերի 2-ին | Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար |
| 9 | Հաշվառում չունեցող քաղաքացիներն ընտրողների ցուցակներում ընդգրկվելու վերաբերյալ հայտ կարող են ներկայացնել.<br>*համայնքի ղեկավարին՝ քվեարկության օրվանից մինչև 21 օր առաջ*<br><br>*լիազոր մարմին կամ նրա տարածքային ստորաբաժանում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ քան մինչև 15 օր առաջ* | 10, կետ 3 | մինչեւ 2008թ.սեպտեմբերի 21-ը<br><br>մինչեւ 2008թ.սեպտեմբերի 27-ը | Համայնքի ղեկավար, լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար |
| 10 | Թեկնածուների առաջադրման փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են<br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 եւ ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչեւ ժամը 18:00-ն* | 135, կետ 3 | 2008թ.սեպտեմբերի 12-ից 2008թ.սեպտեմբերի 17-ը մինչեւ ժամը 18:00 | Թեկնածուներ, լիազոր ներկայա ցուցիչներ |
| 11 | Նախընտրական հիմնադրամի ձեւավորումը<br>*առաջադրման փաստը հավաստող տեղեկանքը ստանալու օրվանից* | 25 եւ 128 | 2008թ.սեպտեմբերի 13-ից | Առաջադրված թեկնածուներ |
| 12 | Թեկնածուների գրանցումը կատարվում է<br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 25 եւ ոչ ուշ, քան 20 օր առաջ՝ մինչեւ ժամը 18:00-ն* | 135, կետ 4 | 2008թ.սեպտեմբերի 17-ից 2008թ.սեպտեմբերի 22-ը մինչեւ ժամը 18:00 | ԸԸՀ |
| 13 | Նախընտրական քարոզչությունը սկսվում է<br>*թեկնածուների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը, ավարտվում՝ քվեարկությունից մեկ օր առաջ* | 18, կետ 5 եւ 129 | 2008թ.սեպտեմբերի 23-ից 2008թ.հոկտեմբերի 10-ը մինչեւ ժամը 24:00 | Գրանցված թեկնա ծուներ, վստահված անձեր |
| 14 | Քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում հատուկ տեղեր առանձնացվում են<br>*ոչ ուշ քան նախընտրական քարոզչությունն սկսվելուց 5 օր հետո* | 21, կետ 2 | մինչեւ 2008թ.սեպտեմբերի 28-ը | Համայնքի ղեկավար |
| 15 | Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են<br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 26 եւ ոչ ուշ, քան 23 օր առաջ՝ մինչեւ ժամը 18:00-ն* | 37, կետ 2 | 2008թ.սեպտեմբերի 16-ից 2008թ.սեպտեմբերի 19-ը մինչեւ ժամը 18:00 | ԸԸՀ |
| 16 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերն անցկացվում են<br>*հանձնաժողովի կազմավորման հաջորդ օրը՝ ժամը 12:00-ին* | 37, կետ 4 | 2008թ.սեպտեմբերի 20-ին ժամը 12:00-ին | ԸԸՀ |
| 17 | Ինքնաբացարկի մասին դիմում ներկայացվում է<br>*քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ* | 125, կետ 2 | մինչեւ 2008թ.հոկտեմբերի 2-ը | Թեկնածուներ |
| 18 | Քվեաթերթիկները թողարկվում են<br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 9-ը եւ ոչ ուշ, քան 3 օր առաջ* | 49[1], կետ 8 | 2008թ.հոկտեմբերի 3-ից 2008թ.հոկտեմբերի 9-ը | ԸԸՀ |
| 19 | Թեկնածուների վարկանիշերի վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակումն արգելվում է<br>*քվեարկության օրվան նախորդող 7 օրվա ընթացքում (ներառյալ քվեարկության օրը՝ մինչեւ՝ ժամը 20.00-ն)* | 22, կետ 3, 2-րդ մաս | արգելվում է 2008թ.հոկտեմբերի 5-ից ժամը 00.00-ից հետո՝ մինչեւ քվեարկության օրը ժամը՝ 20.00-ն | ԶԼՄ-ներ, քաղաքացիներ, կազմակերպություններ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 20 | Քաղաքացիների, կուսակցությունների կողմից ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու, քաղաքացու կողմից ընտրողների ցուցակում ընդգրկվելու կամ ընտրողների ցուցակից դուրս գալու մասին համայնքի ղեկավարին դիմում ներկայացվում է<br>*քվեարկության օրվանից մինչեւ 7 օր առաջ* | 14, կետ 1 | մինչեւ 2008թ.հոկտեմբերի 5-ը | Քաղաքացու դիմումի հիման վրա՝ համայնքի ղեկավար |
| 21 | Քաղաքացիների, կուսակցությունների կողմից ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու, քաղաքացու կողմից ընտրողների ցուցակում ընդգրկվելու կամ ընտրողների ցուցակից դուրս գալու մասին դիմում ներկայացվում է<br>*քվեարկության օրվանից մինչեւ 5 օր առաջ* | 14, կետ 1 | մինչեւ 2008թ.հոկտեմբերի 7-ը | Քաղաքացու դիմումի հիման վրա՝ լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար |
| 22 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում է<br>*քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5 եւ ոչ ուշ, քան 3 օր առաջ* | 49[2], կետ 4 | 2008թ.հոկտեմբերի 7-ից 2008թ.հոկտեմբերի 9-ը | ԿԸՀ |
| 23 | Ընտրողների վերջնական ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են<br>*քվեարկության օրվանից առնվազն 2 օր առաջ* | 12, կետ 2[1] | 2008թ.հոկտեմբերի 10-ին | Լիազոր մարմին կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավար |
| 24 | Ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ տեղամասերի, տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված 2 օրինակից, տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում է<br>*քվեարկության օրվանից առնվազն 2 օր առաջ* | 12, կետ 2 | 2008թ.հոկտեմբերի 10-ին | Լիազոր մարմին կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավար |
| 25 | Ընտրողների ցուցակի վերջնական օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է<br>*քվեարկության օրվանից 2 օր առաջ* | 13, կետ 6 | 2008թ.հոկտեմբերի 10-ին | ՏԸՀ նախագահ |
| 26 | Քվեարկության սենյակը կահավորվում է<br>*քվեարկությունն սկսվելուց առնվազն 24 ժամ առաջ* | 47, կետ 3 | մինչեւ 2008թ.հոկտեմբերի 11-ը ժամը 08:00-ն | ԸԸՀ, ՏԸՀ եւ համայնքի ղեկավար |
| 27 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները եւ կնիքների փաթեթները հանձնվում են<br>*քվեարկության նախորդ օրը* | 49[1], կետ 9<br>49[2], կետ 5 | 2008թ.հոկտեմբերի 11-ին | ԸԸՀ |
| 28 | Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները, ընտրողների ցուցակների էջերը ստորագրվում են<br>*քվեարկության նախորդ օրը մինչեւ ժամը 24:00-ն* | 53, կետ 1 | 2008թ.հոկտեմբերի 11-ին մինչեւ ժամը 24:00-ն | ՏԸՀ |
| 29 | Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսվում է<br>*քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին* | 53, կետ 2 | 2008թ.հոկտեմբերի 12-ին ժամը 07:00-ին | ՏԸՀ |
| 30 | Քվեարկությունը | 46 | 2008թ.հոկտեմբերի 12-ին ժամը 08:00-ից մինչեւ 20:00-ն | ՏԸՀ |
| 31 | Տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է<br>*ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո* | 61, կետ 6 | 2008թ.հոկտեմբերի 13-ին մինչեւ ժամը 06:00-ն | ՏԸՀ նախագահ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 32 | Փաքեթավորված եւ պարկի մեջ դրված ընտրական փաստաթղթերը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակը, տեղամասում քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ արձանագրությունը, գործավարության մատյանը, կնիքը (քվեատուփերը եւ քվեարկության խցիկները) ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են *քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում* | 61, կետ 9 ԿԸՀ 22.06.05թ. թիվ 20-Ն որոշում | 2008թ.հոկտեմբերի 13-ին մինչեւ ժամը 08:00-ն | ՏԸՀ նախագահ եւ քարտուղար |
| 33 | Ընտրությունների նախնական արդյունքներն ամփոփվում եւ արձանագրվում են *քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում,* | $63^1$, կետ 1 | 2008թ.հոկտեմբերի 13-ին մինչեւ ժամը 14:00-ն | ԸԸՀ |
| 34 | Վերահաշվարկի պահանջի մասին դիմումներն ընդունվում են *քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 14.00-ն* | $40^2$, կետ 7 | 2008թ.հոկտեմբերի 13-ին մինչեւ ժամը 14:00-ն | ԸԸՀ |
| 35 | ՏԸՀ-ների կնիքները ԸԸՀ-ից ԿԸՀ ներկայացվում են *քվեարկության ավարտից 24 ժամ հետո* | 63, կետ 3 | 2008թ.հոկտեմբերի 13-ին մինչեւ ժամը 20:00-ն | ԸԸՀ |
| 36 | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վերահաշվարկի աշխատանքներն իրականացվում են *քվեարկության օրվանից 2 օր հետո՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից 5 օր հետո՝ ժամը 14.00-ն* | $40^2$, կետ 7 և 12 | 2008թ.հոկտեմբերի 14-ը ժամը 09:00-ից մինչև 2008թ.հոկտեմբերի 17-ը ժամը 14:00 | ԸԸՀ |
| 37 | ԸԸՀ-ում ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմվում է *քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր հետո:* | $63^1$, կետ 2 | 2008թ.հոկտեմբերի 17-ին մինչեւ ժամը 20:00-ն | ԸԸՀ |